

Վ. Լ. Կատվայան

Բարբառային հայերենը Հայաստանի Հանրապետությունում

(Ներկայացված է ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյանի կողմից 11/III 2024)

Բանալի բառեր. *գաղթ, բարբառ, խոսվածք, հատկանիշ, դասակարգում, հնչյուն, ձևաբանական համակարգ:*

Ներածություն: Հայոց լեզուն, ինչպես և ցանկացած լեզու, ի սկզբանե դրսևորվել է բարբառային վիճակով, որը նախ ծնունդ է տվել առանձին բարբառների, ապա ժամանակի ընթացքում հիմք է դարձել խոսակցական ու գրական տարբերակների առաջացման համար: Հայերենի բարբառների կամ դրանց յուրահատկությունների մասին վկայություններ կան դեռևս 5-րդ դարից: Արդեն 8-րդ դարում Ստեփանոս Սյունեցի քերականը թվարկում է հայերենի յոթ բարբառ՝ Կորճայքի, Տայքի, Խուրթի, Չորրորդ Հայքի, Սպերի, Սյունիքի և Արցախի (տե՛ս [1], էջ 16-17): 19-րդ դարի նշանավոր հայագետ Ա.Այտընյանը իրավացիորեն գրում է. «Հայաստանի պէս ընդարձակ երկրի մը բազմաթիւ գաւառներուն մէջ հին ժամանակները քանի մը այլակերպ բարբառներ գործածուիլն այնչափ բնական էր, որ եթէ գրաւոր վկայութիւններն ալ լռէին՝ լոկ մակարերութիւնը դեռ կարժէր» ([2], էջ 42-43): Դիտարկելով իր ժամանակի բարբառային հայերենը՝ հայագետը բարբառները բաժանում է երկու խմբի. 1. արևմտյան բարբառներ՝ ա) Հայաստան (Վան, Միջագետք և այլն), բ) Կոստանդնուպոլիս-Փոքր Ասիա, գ) Լեհաստան-Առտեալ և 2. արևելյան բարբառներ՝ Աստրախան-Պարսկաստան, որ ձգվում է Ռուսաստանից մինչև Հնդկաստան (տե՛ս [2], էջ 166): Ընդ որում Այտընյանը համարում է, որ արևմտյան խմբի բարբառները միննույն աղբյուրից են առաջ եկել,

մինչդեռ արևելյան խումբը իր ծագումն առել է մեկ այլ՝ հին գավառականից ([2], էջ 166): Հայոց լեզվի բոլոր բարբառները արևելյան և արևմտյան խմբերի է բաժանում նաև Ք.Պատկանյանը (տե՛ս [3], էջ 17): Հ.Աճառյանը «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ առանձնացնում է հայերենի 31 բարբառներ, դրանք խմբավորում է Ում, Կը և Ել ճյուղերում, բայց և չի ժխտում, որ Ում և Ել ճյուղերում ընդգրկված են արևելյան բարբառները, իսկ Կը ճյուղում՝ արևմտյան բարբառները ([4], էջ 35): Ա.Ղարիբյանն արդեն ընդունում է հայերենի հինգ տասնյակից ավելի բարբառների գոյությունը ([5], էջ 4, 86-106): Ի վերջո, Գ.Զահուկյանը եղեռնին նախորդող շրջանի համար ընդունում է հայերենի 44 բարբառների գոյությունը՝ դրանք ընդգրկելով հայերենի բարբառների արևմտյան (29 միավոր) և արևելյան (15 միավոր) խմբակցություններում (տե՛ս [1], էջ 132-136):

Փաստորեն պատմական հանգամանքների բերումով ոչ միայն Հայաստանն է տրոհվել արևմտյան և արևելյան հատվածների, այլ նաև բարբառներն են բաժանվել համապատասխան երկու մեծ խմբի՝ իբրև ժողովրդի պատմության հետ լեզվի պատմական զարգացման կապի արտահայտություն:

Ցանկացած ժողովուրդ իր պատմության ընթացքում ունեցել է դժվարին ժամանակներ, պայքարել օտարների ներխուժումների կամ լծի դեմ, բայց եթե նման արհավիրքները աղետի չեն վերածվել ու չեն ուղեկցվել բնակչության նշանակալի տեղաշարժերով կամ կոտորածներով, ուրեմն այդ ժողովրդի բարբառները պահպանել են իրենց տարածական հիմքերը: Նման դեպքերում բարբառները երևան են բերում լեզվական հատկանիշների աստիճանական անցումներ, ընդ որում տարածական մերձավորությունը ուղեկցվում է նաև լեզվականով: Այդպես է իրավիճակը, օրինակ՝ ռուսերենի, ֆրանսերենի, իտալերենի, այլ լեզուների բարբառների դեպքում: Բոլորովին այլ է հայերենի պարագան: Միջին դարերից սկսած՝ հայության գաղթերն ու պարբերական տեղաշարժերը արդեն խախտել էին հայերենի շատ բարբառների տարածական հիմքերը, բարբառային հատկանիշների տարածման բնական սահմանները: 17-րդ դարի սկզբին (1604 թ.) Շահ Աբասի կողմից դեպի Պարսկաստան արևելահայության բռնագաղթի կազմակերպումը մեծագույն աղետ էր նաև հայ բարբառների համար: Այնուհետև 19-րդ դարի սկզբի ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմները պատճառ դարձան հայության մեծ տեղաշարժերի, այս անգամ՝ Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից դեպի Արևելյան Հայաստան: Եղեռնից առաջ բարբառային հայերենը գործառու էր ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 1911 թվին Հ.Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն» աշ-

խատության մեջ վկայում է. «Հայութեան մեծագոյն մասը դեռ այսօր ալ կը գտնուի իր հայրենիքին մէջ. բայց իր հայրենիքէն դուրս տարածուած է նաև բազմաթիւ ուրիշ երկիրներու մէջ» (տե՛ս [4], էջ 25): Մյուս կողմից՝ հայության թուրքահպատակ շատ հատվածներ արդէն կորցրել էին մայրենի լեզուն և դարձել թուրքախոս:

Օսմանյան Թուրքիայի իրականացրած հայերի ցեղասպանութիւնը ծանր հարված հասցրեց նաև բարբառային հայերենին: Արևմտյան Հայաստանն ու թուրքական կայսրության հայաբնակ վայրերը հայաթափվեցին ու հայերենազրկվեցին: Իսպառ կորստի մատնվեցին բանավոր զարգացման դարավոր ուղի անցած, հնչունաքերականական ու բառապաշարային յուրահատուկ կազմություն ունեցող տասնյակ հայ բարբառներ, բարբառային հայերենի համակարգային դրսևորումներ:

19-20-րդ դարերի իրադարձությունների հետևանքով հայության տեղահանված, մագապուրծ զանգվածներն ապաստան գտան Արևելյան Հայաստանում՝ իրենց հետ բերելով բարբառային բազմազան դրսևորումներ: Ժամանակի ընթացքում, լեզվի ընդհանուր զարգացմանը զուգահեռ, տեղի են ունեցել լեզվական տարատեսակ փոխազդեցություններ: Շատ միավորներ բարբառային այլ միջավայրում ձուլվել ու կորստի են մատնվել, շատերն էլ այս կամ այն չափով պահպանվել են ու շարունակել զարգանալ: Ընդհանուր առմամբ գործընթացները չեն հանգեցրել համահարթեցման, լեզվական միատարրության: Ինչպես նկատվել է անցյալ դարի վերջերին, Հայաստանում «անհամեմատ շատ են այն շրջանները, որոնց համար բնորոշը բազմաբարբառայնությունն ու բազմախոսվածքայնությունն է: Այդպիսի շրջաններում մեկից ավելի բարբառների, տարբեր բարբառների զանազան խոսվածքների ներկայացուցիչներ են բնակվում» ([6], էջ 8): Հետաքրքրական է, որ մեր օրերում էլ իրավիճակը հիմնականում նույնն է, ավելին՝ Արցախի բնակչության բռնի տեղահանության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում բարբառային լեզվի գործածության ոլորտում կարող են ի հայտ գալ նոր զարգացումներ:

Գրականության վերլուծություն: Հայերենի բարբառների ուսումնասիրության ոլորտում կատարվել է զգալի աշխատանք: Մեծ ուշադրություն է դարձվել առանձին բարբառների հետազոտությանը: Ճիշտ է, յուրաքանչյուր դեպքում դիտարկվել է հիմնականում բարբառային կենտրոնի խոսվածքը, բայց հաճախ անդրադարձ է կատարվել նաև կարևոր այլ խոսվածքների, վեր են հանվել էական տարբերակային իրողություններ, նշվել են բարբառի տարածման շրջանները: Այդպես նկարագրվել են շատ բարբառներ, ձևավորվել է բարբառային միավորների նախնական տարածման ընդհանուր պատկերը (տե՛ս [7-11] և

այլն): Որոշ դեպքերում ներկայացվել են որևէ բարբառի տարբերակային դրսևորումները ըստ բնակավայրերի խմբերի (տե՛ս, օրինակ, [12]), առանձին տարածաշրջանների (տե՛ս [6]): Որոշակի տարածաշրջաններում բարբառային տարբեր միավորների տարածագործառական յուրահատկությունների հետազոտություններ ևս կատարվել են (տե՛ս [13, 14]): Հայ բարբառագիտության ոլորտում զգալի ներդրում են հնչյունաքերականակն ու բառագիտական բարբառային գուգաբանությունների տարածագործառական հետազոտությունները (տե՛ս [15-22] և այլն): Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով [23]: Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագետները գիտարշավների ընթացքում մոտ 500 տետրերում արձանագրել են բարբառային հայերենի հատկանիշները ըստ առանձին բնակավայրերի՝ հատկապես նպատակ ունենալով գրանցել Արևմտյան Հայաստանի խոսվածքների հատկանիշները:

Հայոց լեզվի կենդանի բոլոր տարբերակների տարածագործառական յուրահատկությունների վերհանումն ու նկարագրությունը արդի բարբառագիտության կարևորագույն խնդիրներից են: Այդ ուղղությամբ ևս որոշակի աշխատանքներ կատարվել են: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների խումբը դաշտային աշխատանքներ է կատարել Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի մարզերի գրեթե բոլոր բնակավայրերում, հավաքել բարբառագիտական հսկայական նյութ, որի մշակմամբ ու հետազոտությամբ արդեն հրապարակվել են Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի և՛ ընդհանուր, և՛ բնակավայրերից յուրաքանչյուրի լեզվական բնութագրերը ամփոփող հատորները [24, 25]: Ինչպես իրավացիորեն նկատել է Ա.Ղարիբյանը. «Ամեն մի բարբառին պատկանող տեղական խոսվածքները նույնպես խոշոր տարբերություններ ունեն միմյանցից, այնպես որ կարելի է ասել որքան գյուղ, այնքան խոսվածք» ([5], էջ 86): Հետևում է, որ հայոց լեզվի հետազոտությունը հնարավորինս ամբողջական կարելի է համարել, եթե հետազոտված ու նկարագրված լինեն նրա տարբերակային բոլոր դրսևորումները: Ինչևէ, հարափոփոխ այս ժամանակներում անհրաժեշտություն է առնվազն ընդհանուր գծերով ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ներկայում գործածվող բարբառներն ու խոսվածքները, անդրադառնալ դրանց առավել էական ու հետաքրքրական որոշ հատկանիշների՝ նաև այդպիսով նպաստելով բարբառային խոսքի առավել հանգամանալից ուսումնասիրությանը:

Հայաստանի Հանրապետությունում գործածվող բարբառային միավորները: Ներկայում ՀՀ-ում գործածվում են բարբառային 15 միավորներ. Արարատյան, Ղարաբաղի, Բայազետի, Դիադինի, Խոյ-Մարաղայի, Կարնո, Սշո, Վանի, Կաքավաբերդի, Կարձևանի, Սասու-

նի բարբառներ, Գանձակի և Վայոց ձորի միջբարբառներ, Արծափի և Մակուի խոսվածքներ:

Արանցից արևելյան խմբում են դասվում Արարատյան, Ղարաբաղի, Խոյ-Մարաղայի, Բայազետի, Կաքավաբերդի, Կարճևանի բարբառները, Գանձակի և Վայոց ձորի միջբարբառները, Արծափի և Մակուի խոսվածքները¹: Բարբառների արևմտյան խմբում են դասվում Դիադինի, Կարնո, Սշո, Վանի, Սասունի բարբառները:

Արևելյան բարբառներից ՀՀ-ում առավել տարածվածը Արարատյան բարբառն է, որ տարբեր ժամանակների իր վիճակներով դարեր շարունակ եղել է Մեծ Հայքի Այրարատ, Գուգարք նահանգների, նաև հարակից վայրերի բնակչության հիմնական մասի հաղորդակցման միջոցը: Ա.Ղարիբյանը Արարատյան բարբառի հետքեր է տեսնում հին գրականության, հին աղբյուրների մեջ՝ սկսած 5-րդ դարից: Համաձայն Ա.Ղարիբյանի՝ դեռևս 15-18-րդ դարերում հայոց կենդանի ընդհանուր լեզուն մշակվում էր բարբառների և հատկապես Արարատյան բարբառի օգտագործումով: Արարատյան բարբառի հիմքի վրա է ձևավորվել խոսակցական հայերենը, այնուհետև՝ գրական արևելահայերենը: Լեզվաբանը նկատում է, որ Արարատյան բարբառը իր ընդգրկման նախնական տարածքներում բնակչության տեղաշարժերի ու գաղթերի հետևանքով հաճախ ընդմիջվում է այլ բարբառներով, և Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն (տե՛ս [5], էջ 218, 219): Այսօր էլ բարբառը լայն տարածում ու մեծ գործածականություն ունի, պահպանում է իր հարուստ բառապաշարը, քերականական յուրահատկությունները: Այն հայոց լեզվի՝ իր բնօրրանում կենդանի ու բնական դրսևորում է և որոշակիորեն շարունակում է պահպանել իր դերը ընդհանուր լեզվի փոփոխությունների և զարգացման գործում: Ներկայում բարբառը տա-

¹ Պետք է նշել, որ Բայազետի բարբառը, պատկանելով Ում ճյուղին և դասվելով արևելյանների խմբում, համատեղում է երկու խմբերին հատուկ հատկանիշներ՝ թերևս արևմտյաններին բնորոշ հատկությունների գերակշռությամբ (տե՛ս [26]): Հայ բարբառագիտությունը վերջնականապես չի ճշգրտել Մակուի և Արծափի խոսվածքների կարգավիճակը, դրանք դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն: Գ.Ջահուկյանը Կաքավաբերդի և Կարճևանի բարբառները ընդգրկել է Մեղրու բարբառի շրջանակում (տե՛ս [1], էջ 136), մինչդեռ Հ.Մուրադյանը այդ երկուսը ներկայացրել է իբրև ինքնուրույն բարբառներ (տե՛ս [27, 28]): Բացի այդ, ժամանակին Ա.Ղարիբյանը թվարկել է Մեղրու և Կարճևանի բարբառային միավորների մի շարք էական տարբերություններ և եզրակացրել, որ այդ երկուսը անկախ բարբառներ են (տե՛ս [5], էջ 90): Ինչ վերաբերում է Մեղրու բարբառին, ապա այն համարվում է մեռած, այդ մասին դեռևս 1953 թ. վկայել է Է.Աղայանը (տե՛ս [29]):

րածված է Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի, Արարատի մարզերում, ընդգրկում է Լոռու գրեթե ողջ մարզը: Արարատյան բարբառով խոսում է շուրջ 270 000 մարդ²:

Ղարաբաղի բարբառի բնօրրանը Սյունիք - Արցախ տարածաշրջանն է: Այն հայերենի ամենահին բարբառներից է, որի մասին ակնարկներ ունեն Խորենացին, Կորյունը, Կաղանկատվացին, և որը հիշատակված է Ստեփանոս Սյունեցու (8-րդ դար) թվարկած յոթ բարբառների շարքում: Ըստ Ա.Ղարիբյանի՝ Ղարաբաղի բարբառը մեր կենդանի բարբառներից ամենամեծն էր, դրանով խոսողների թիվը 20-րդ դարի կեսերին կես միլիոնից ավելի էր (տե՛ս [5], էջ 230): Նախքան արցախցիների բռնագաղթը ՀՀ-ում Ղարաբաղի բարբառով խոսում էին Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի շրջաններում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում, Կոտայքի մարզի որոշ գյուղերում, մոտավորապես 120 000 մարդ: Ընդ որում Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում բարբառի կրողները Արցախից և հարակից տարածքներից ավելի վաղ բռնագաղթածներն են: Ադրբեջանի ցեղասպանական վերջին գործողությունների պատճառով Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած արցախցիների հաշվին, կարելի է ասել, Ղարաբաղի բարբառակիրների քանակը գրեթե կրկնապատկվել է, սակայն արցախցիները ՀՀ-ում իրենց համայնքներով միասնաբար չեն ապրում, բնականաբար չկա միասնական հաղորդակցում: Նկատենք նաև, որ Լեռնային Ղարաբաղում գործածվում էին ևս հինգ բարբառային միավորներ (Հաղրութի, Մեհտիշենի, Շաղախ-Խծաբերդի, Մարաղայի բարբառներ, Ուրմիայի /Չայլունների/ խոսվածքներ), որոնց կրողները նույնպես ապաստանել են Հայաստանի Հանրապետությունում: Ցավոք, դարաբաղյան բարբառների խոսվածքները, որ հայոց լեզվի մի հզոր երակ են, ամփոփում են հայերենի զարգացման հնագույն ու հին շրջաններից եկող հնչյունական, բառապաշարային ու քերականական ինքնատիպ իրողություններ, զրկվել են իրենց տարածական հիմքերից և կանգնած են կորստյան վտանգի առաջ:

Խոյ-Մարաղայի բարբառը կրողների նախնիները 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Պարսկաստանի Խոյ, Մարաղա, Ուրմիա և շրջակա այլ բնակավայրերից են զանգվածաբար գաղթել

² Բարբառակիրների քանակին վերաբերող տեղեկությունները (հատկապես բազմաթիվ բնակավայրեր ընդգրկող բարբառների դեպքում) բավականին մոտավոր են՝ թարմ տվյալների բացակայության պատճառով: Սակայն դրանք կարող են որոշակի պատկերացում տալ բարբառների տարածվածության վերաբերյալ:

Արևելյան Հայաստան: Ներկայում բարբառը գործածական է Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի մարզերում, Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում, Կոտայքի, Արագածոտնի մարզերի որոշ բնակավայրերում: Բարբառով խոսում է շուրջ 230 000 մարդ:

Բայազետի բարբառը մինչև 19-րդ դարի սկզբները գործառում էր Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառում: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կազմակերպված զանգվածային արտագաղթի հետևանքով գաղթական բայազետցիների հիմնական հատվածը հաստատվում է Սևանա լճի ափերին: Բարբառով ներկայում խոսում են Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի և շրջակա 10 գյուղերի բնակիչները (տե՛ս [26]), բարբառի խոսվածքներով հաղորդակցվում են նաև Կոտայքի մարզի Ակունք, Գեղարդ, Գողթ, Կոտայք, Հատիս և Արագածոտնի մարզի Քուչակ, Կարբի գյուղերում: Բարբառով խոսում է շուրջ 70 000 մարդ:

Գանձակի միջբարբառով խոսում են Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանում, Տավուշի մարզում, մոտավորապես 125 000 մարդ: Այս միջբարբառում զուգորդվում են Արարատյան և Ղարաբաղի բարբառների հատկանիշներ, ընդ որում Ա.Ղարիբյանը նկատել է, որ Գանձակից դեպի արևմուտք Արարատյան բարբառի գծերն ուժեղանում են, «Շամշադինի և Դիլիջանի խոսվածքների մեջ գերակշիռ տեղ բռնում են Արարատյան բարբառի գծերը» ([5], էջ 235): Պետք է նկատել, որ այսօր էլ, օրինակ, Ճամբարակի և Բերդի տարածաշրջաններում միջբարբառը ավելի մոտ է Ղարաբաղի բարբառին, իսկ Իջևանի և Դիլիջանի տարածաշրջաններում՝ Արարատյան բարբառին:

Վայոց ձորի միջբարբառով հաղորդակցվում են Վայոց ձորի մարզի Արենի, Աղավնաձոր, Գնիշիկ, Գնդեվազ, Խաչիկ, Կեչուտ, Ռինդ, Զիվա, Արփի, Հորս, Նոր Ազնաբերդ գյուղերում, մասամբ նաև Զեդեա, Եղեգիս բնակավայրերում, Ջերմուկ քաղաքում, Արարատի մարզի Եղեգնավան գյուղում, մոտավորապես 13 000 մարդ: Նկատվել է, որ միջբարբառի որոշ հատկանիշներ իրենց արտահայտությունն ունեն միջնադարյան վիմագիր արձանագրություններում, ձեռագիր հիշատակարաններում (տե՛ս [30], էջ 9):

Կաքավաբերդի բարբառով խոսում են Սյունիքի մարզի Մեղրու համայնքի Վահրավար, Գուղեմնիս, Կուրիս գյուղերում՝ մոտ 130 մարդ: Գյուղերն իրարից մեկ-երկու կիլոմետր հեռավորության վրա են գտնվում և ունեն Կաքավաբերդ ընդհանուր անվանումը: Նկատի ունենալով աշխարհագրական այդ միասնական անվանումը և խոսվածքների ձևաբանական ընդհանրությունները՝ դրանք պայմանականորեն անվանվել են Կաքավաբերդի բարբառ:

Կարճևանի բարբառով խոսում են Սյունիքի մարզի Մեղրու համայնքի Կարճևան գյուղում՝ մոտ 300 մարդ: Է.Աղայանը նկատել է, որ Մեղրու տարածաշրջանի բազմաթիվ գյուղեր խոսում են Ղարաբաղի բարբառով, իսկ Մեղրին, Կաքավաբերդը և Կարճևանը ներկայացնում են առանձին բարբառներ, որոնք իրար բավականաչափ մոտ են և ակնհայտորեն ներկայացնում են մի ընդհանուր բարբառի զարգացման տարբեր ընթացքն ու աստիճանը (տե՛ս [29], էջ 12): Կարճևանի բարբառը պահպանել է արխաիկ շատ իրողություններ, որոնք կարող են նպաստել ինչպես հայոց լեզվի պատմության, այնպես էլ տարածաշրջանի պատմական, ազգագրական, ժողովրդագրական ու այլ կարգի շատ հարցերի պարզաբանմանը:

Արծափի խոսվածքով հաղորդակցվում են Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ, Կոտայքի մարզի Մեղրաձոր, Սրգաշեն և Արագյուղ բնակավայրերում, մոտավորապես 9000 մարդ: Հայտնի է, որ խոսվածքի կրողների նախնիները 1828-1832թթ. գաղթել են Արևմտյան Հայաստանի Արծափ գավառակից (տե՛ս [13], էջ 70):

Մակուի խոսվածքով հաղորդակցվում են Գեղարքունիքի մարզի Գեղամավան, Դդմաշեն, Ջովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Նորաշեն, Վարսեր գյուղերում, Սևան քաղաքի որոշ թաղամասերում, Կոտայքի մարզի Ալափարս, Արզական, Քաղսի, Գառնի, Արագածոտնի մարզի Վարդենիս գյուղերում, մոտավորապես 28 000 մարդ: Այս խոսվածքը կրողների նախնիները գաղթել են Պարսկաստանի Մակու գավառից 1829-1830 թթ.:

Արևմտյան կամ Կը ճյուղի հինգ բարբառներից երեքը (Մշո, Կարնո, Դիադինի) Արևելյան Հայաստանում սկսել են գործառել 1829-1830 թթ. Արևմտյան Հայաստանից հայերի զանգվածային գաղթից հետո, մյուս երկուսը՝ Մասունի և Վանի բարբառները, եղեռնից մազապուրծ հայերն են բերել Արևելյան Հայաստան հիմնականում 1915-1918 թթ.:

Հայաստանի Հանրապետությունում հայերենի արևմտյան տարբերակներից ամենատարածվածը Կարնո բարբառն է, որով խոսում են Շիրակի մարզում՝ առավելաբար Գյումրի քաղաքում, Ախուրյանի, Արթիկի, Անիի տարածաշրջաններում, նաև Ամասիայի և Աշոցքի շրջաններում, բարբառի խոսվածքներ են գործածվում Արագածոտնի մարզի որոշ գյուղերում ևս: Բարբառակիրների քանակը հասնում է մոտ 220 000-ի: Բարբառով հաղորդակցվում են նաև Վրաստանի Ախալցխայի, Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ծալկայի հայաբնակ շրջաններում: Կարնո բարբառի մասին ամենահին վկայությունը համարվում է Ստ.Սյունեցու (8-րդ դար) կողմից հայերեն բարբառների թվում Սպերի խոսվածքի հիշատակումը: Բարբառային այս միավորը Կը

Ճյուղի ամենատարածված բարբառներից մեկն էր Արևմտյան Հայաստանում, նրա կենտրոնը Կարին քաղաքն էր: Ինչպես նշում է Հ.Աճառյանը, 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայ գաղթականությունը Կարնո բարբառը հասցնում է մինչև Երևան և Թիֆլիս, և 20-րդ դարի սկզբներին Կովկասի չորս քաղաքների՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի և Ախալցխայի ողջ հայությունը խոսում էր Կարինի հայության նույն բարբառով (տե՛ս [4], էջ 104): Հայագետը նշել է նաև, որ Կարնո բարբառը, չնայած իր լայն ընդգրկմանը, չունի բազմաթիվ ենթաբարբառներ (տե՛ս [4], էջ 11): Նախքան եղեռնը Էրզրումի նահանգի բազմաթիվ բնակավայրերում դեռևս ապրում էին տասնյակ հազարավոր հայեր՝ Կարնոբարբառի կրողներ, սակայն եղեռնից հետո ինչպես ողջ Արևմտյան Հայաստանը, այնպես էլ հիշյալ նահանգը հայաթափվեց ու հայերենագրկվեց:

Հայաստանի Հանրապետությունում մեծ տարածում ունի նաև Մշո բարբառը, որով խոսում են Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանում, Վարդենիսի որոշ գյուղերում, Արագածոտնի մարզի Ապարանի, Թալինի, Աշտարակի տարածաշրջանների, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի, Լոռու մարզերի մի շարք բնակավայրերում, մոտավորապես 170 000 մարդ: Ինչպես նկատվել է, Մշո բարբառով խոսում էին Մուշ քաղաքի և շրջակա 600 գյուղերի հայ բնակիչները (տե՛ս [31], էջ 363): Մուշի և Ալաշկերտի բնակչության մի մասը ևս ռուս-թուրքական պատերազմների շրջանում գաղթել ու բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում՝ Ապարանում և Նոր Բայազետի հարավային կողմերում՝ Սևանա լճի ափերին (տե՛ս [31], էջ 363), այլ վայրերում, իսկ բնօրրանում մնացածների սերունդները եղեռնի գոհ են դարձել կամ տարագրվել: Մշո բարբառը կրող հայեր բնակվում են նաև Վրաստանի մի շարք բնակավայրերում:

1829-1830 թթ. գաղթի ժամանակ են Արևելյան Հայաստանում ապաստան գտել նաև Դիադինի բարբառի կրողների նախնիները: Բարբառի բնօրրանը՝ Դիադինի գավառակը, Բայազետի գավառի կազմում էր: Այսբարբառով ներկայում խոսում են Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, մոտավորապես 13 000 մարդ:

Սասունի բարբառով խոսում են Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի մի շարք և Աշտարակի տարածաշրջանի որոշ գյուղերում, մոտավորապես 10 000 մարդ: Ինչպես վկայել է Վ.Պետոյանը, Սասունի գավառն ուներ 10 շրջան՝ 539 գյուղով, և Սասունի հայ բնակչությունը կազմում էր 35 հազար շունչ: Նրանց մի մասը բնաջնջվել է 1894, 1904 թվերի ազգային – ազատագրական շարժումների ժամանակ, բնակչությունը մեծ կորուստներ է կրել նաև եղեռնի ընթացքում: 1916թ. Սասունի անմատչելի վայրերում, Անդրքում և

Գելիեգուզանում ապաստանած մոտ 10 հազար սասունցիներ ռուսական բանակի հետ տեղափոխվել են Կովկաս և բնակություն հաստատել Աշտարակի և Թալինի գյուղերում (տե՛ս [32], էջ 7)³:

Վանի բարբառով խոսում են Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Լեռնանիստ գյուղում, Հրազդան քաղաքի Կաքավաձոր, Ջրառատ և Վանատուր թաղամասերում, մոտավորապես 7000 մարդ: Հ.Աճառյանի վկայությամբ բարբառը եղեռնից առաջ ընդգրկում էր Վանա լճի ողջ արևելյան եզրերը՝ կենտրոն ունենալով Վան քաղաքը՝ շրջակա բազմաթիվ հայկական գյուղերով (տե՛ս [4], էջ 140, [33], էջ 339): Եղեռնը հայաթափեց հիշյալ բոլոր տարածքները, փրկված հայ բնակչության զգալի մասը ապաստան գտավ Արևելյան Հայաստանում, աշխարհի զանազան անկյուններում (տե՛ս [34], էջ 238):

Այսպիսով, ՀՀ գրեթե բոլոր տարածաշրջաններում կողք կողքի գործածվում են բարբառային հայերենի մի քանի տարբերակներ, և թերևս բացառություն է Տավուշի մարզը, որտեղ գործածական են Գանձակի միջբարբառի խոսվածքները:

Մյուս մարզերը, ըստ բարբառային խոսքի տարբերակային դրսևորումների, ներկայացնում են հետևյալ պատկերը⁴.

Կոտայքի մարզ – Արարատյան, Մշո, Խոյ-Մարաղայի, Բայազետի, Վանի, Ղարաբաղի բարբառներ, Մակուի և Արծափի խոսվածքներ.

Արագածոտնի մարզ – Մշո, Կարինի, Մասունի, Արարատյան, Բայազետի բարբառներ և Մակուի խոսվածք.

Գեղարքունիքի մարզ – Բայազետի, Մշո, Դիադինի, Ղարաբաղի բարբառներ, Գանձակի միջբարբառ, Արծափի և Մակուի խոսվածքներ.

Սյունիքի մարզ – Ղարաբաղի, Խոյ-Մարաղայի, Կարճևանի, Կաքավաբերդի բարբառներ.

Արարատի մարզ – Արարատյան, Խոյ-Մարաղայի բարբառներ, Վայոց ձորի միջբարբառ.

Արմավիրի մարզ – Արարատյան, Խոյ-Մարաղայի, Մշո բարբառներ.

³ Փաստեր կան, որ այժմ էլ Մասունում ապրում են ծպտյալ կամ իսլամացած շատ հայեր, որոնք դեռևս պահպանել են Մասունի բարբառը: Չենք բացառում, որ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում դեռևս այս կամ այն կերպ կարող են պահպանված լինել արևմտահայ այլ բարբառների բեկորներ ևս:

⁴ Բերված տվյալները ենթակա են ճշգրտման ՀՀ բոլոր բնակավայրերի խոսվածքների քննության պարագայում: Չի բացառվում, որ առանձին բնակավայրերում դեռևս պահպանված լինեն նաև չարձանագրված բարբառային բեկորներ:

Վայոց ձորի մարզ – Արարատյան, Խոյ-Մարաղայի բարբառներ, Վայոց ձորի միջբարբառ.

Շիրակի մարզ – Կարնո, Մշո բարբառներ.

Լոռու մարզ – Արարատյան, Մշո բարբառներ:

Պետք է նկատի ունենալ, որ երկրում կան նաև շատ բնակավայրեր, որոնցում հաղորդակցման միջոցը խառը տիպի խոսվածքներ են: Պայմանավորված բնակիչների ծագման յուրահատկություններով, գրական ու խոսակցական լեզուների, այլ բարբառների ազդեցություններով՝ նման խոսվածքները զուգորդում են տարբեր բարբառների հատկանիշներ, և դժվար է անվերապահորեն դրանք վերագրել բարբառներից որևէ մեկին: Նման խոսվածքներ շատ են գործածական, օրինակ՝ Կոտայքի, Շիրակի, Արմավիրի մարզերում: Կան նաև քաղաքներ և գյուղեր, որոնցում հաղորդակցման միջոցը առավելապես խոսակցական հայերենն է, ինչպես, օրինակ՝ Երևան, Մեղրի, Աբովյան, Նոր Հաճրն, Սևան քաղաքները, Կոտայքի մարզի Գետարգել, Ջովք, Պտղնի գյուղերը, Գեղարքունիքի մարզի Գագարին ավանը, Ճամբարակի տարածաշրջանի Մարտունի գյուղը և այլն:

Բարբառային միավորների էական մի քանի հատկանիշներ: Հայաստանի Հանրապետությունում գործածվող բարբառային միավորները ունեն ինչպես խմբավորող, այնպես էլ տարբերակող հետաքրքրական մի շարք հատկանիշներ՝ ինչպես հնչյունական, այնպես էլ քերականական:

Հնչյունական հատկանիշներ

Հնչյունաբանական յուրահատկություններ բարբառային միավորները հանդես են բերում թե՛ բաղաձայնական, թե՛ ձայնավորական համակարգերում:

Ամենաընդգրկուն բաղաձայնական հատկանիշը երևան է գալիս հինհայերենյան *բ,գ,դ,ձ,ջ* հնչյունների դիմաց բառակազմում բարբառային տարբերակների արտահայտությամբ⁵: Ըստ այդմ՝ դիտարկվող բարբառային միավորները խմբավորվում են հետևյալ կերպ.

⁵ Ըստ այդմ՝ Ա.Ղարիբջանը կատարել է հայերենի բարբառների հնչյունաբանական դասակարգում (տե՛ս [5], էջ 59-62): Համաձայն այդ դասակարգման՝ Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի, Դիաղինի բարբառները, Մակուի և Արծափի խոսվածքները ընդգրկվում են քառաստիճան բաղաձայնական համակարգ (բ, բ', պ, փ) ունեցող բարբառների խմբում, Վանի, Խոյ-Մարաղայի, Ղարաբաղի բարբառները և Գանձակի ու Վայոց ձորի միջբարբառները ընդգրկվում են երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ (պ, փ) ունեցող բարբառների խմբում, Կաքավաբերդի և Կարձևանի բարբառներն ընդգրկվում են գրաբարակերպ համակարգ (բ, պ, փ) ունեցող բարբառների խմբում, իսկ

1. Բարբառային միավորներ, որոնք հինհայերենյան բ,գ,դ,ձ,ջ-ի դիմաց բառասկզբում ունեն շնչեղ ձայնեղներ՝ բ՛,գ՛,դ՛,ձ՛,ջ՛ (բաց>բ՛աց): Այդպիսիք են Մշո, Կարնո, Բայազետի, Դիադինի, Արարատյան բարբառները, Մակուի և Արծափի խոսվածքները:

2. Բարբառային միավորներ, որոնք հինհայերենյան բ,գ,դ,ձ,ջ-ի դիմաց բառասկզբում ունեն խուլեր՝ պ,կ,տ,ծ,ճ (բաց>պաց): Այդպիսիք են Վանի, Խոյ-Մարաղայի, Ղարաբաղի բարբառները և Գանձակի ու Վայոց ձորի միջբարբառները:

3. Բարբառային միավորներ, որոնք հինհայերենյան բ,գ,դ,ձ,ջ-ի դիմաց բառասկզբում ունեն նույն կարգի հնչյուններ՝ բ,գ,դ,ձ,ջ (բաց>բաց): Այդպիսիք են Կաքավաբերդի և Կարճևանի բարբառները:

4. Առանձնանում է Մասնո բարբառը, որտեղ բառասկզբի ձայնեղների դիմաց գործածվում են խուլեր, իսկ նախնական խուլերի դիմաց՝ ձայնեղներ (բ,գ,դ,ձ,ջ > պ,կ,տ,ծ,ճ /բարն>պարեվ/), և զուգահեռաբար՝ պ,կ,տ,ծ,ճ > բ,գ,դ,ձ,ջ /պանիր>բանիր/):

Բաղաձայնական հատկանիշներից ուշագրավ են նաև հինհայերենյան հ-ի դիմաց խ-ի առկայությունը Վանի, Խոյ-Մարաղայի, Բայազետի, Դիադինի բարբառներում, մասամբ նաև Մշո բարբառում ու Մակուի խոսվածքում (հիվանդ > իիվանդ), միավանկ բառերում ո-ից առաջ շրթնատամնային շփականի առկայությունը հ-ի դիմաց՝ այս կամ այն չափով Կարնո, Արարատյան, Ղարաբաղի բարբառներում, Վայոց ձորի միջբարբառում, Արծափի և Մակուի խոսվածքներում (հոտ > ֆոտ, հոդ > վը՛դ), քմայնացած բաղաձայնների գործածությունը Վանի, Դիադինի, Խոյ-Մարաղայի, Ղարաբաղի, Կարճևանի, Կաքավաբերդի բարբառներում, Վայոց ձորի, Գանձակի միջբարբառներում (ախճիգ, կալ, ըմընէք): Բառասկզբի *ղ*-ի դիմաց *կ* կամ դրան նմանվող օտարամուտ մի հնչյուն ունեն Վանի, Բայազետի, Դիադինի, Խոյ-Մարաղայի բարբառները, Մակուի և Արծափի խոսվածքները (դարիբ > կարիբ), իսկ Մշո բարբառն ունի *խ* (դասար > խասար): Ինչպես հին հայերենը, *ջ* հնչյուն չունեն Ղարաբաղի, Կարճևանի և Կաքավաբերդի բարբառները (ֆայտոն > փայտոն), բառավերջի բաղաձայնահաջորդ *ն*-ն պահպանել են Ղարաբաղի և Կարճևանի բարբառները (ակն > ակնը, ամառն > ամառնը) և այլն:

Չայնավորական հատկանիշներից առավել տարածված է քմայնացած ձայնավորների առկայությունը, որ հատուկ է Վանի, Դիադինի, Խոյ-Մարաղայի, Ղարաբաղի, Կարճևանի, Կաքավաբերդի բարբառներին, Վայոց ձորի և Գանձակի միջբարբառներին, մասամբ նաև Մասնո

Մասնո բարբառն ընդգրկվում է տեղաշարժ-տեղափոխություն (բ>պ, պ>բ) ունեցած բարբառների խմբում:

բարբառին, բարբառային այլ միավորների (լաՎ, տռչս, ծօր)⁶: Արևմրտյան բարբառներին և նրանց հարող միավորներին է հաստուկ բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի անկումը (Մուշ, Վան, Սասուն, Կարին, Դիադին, Բայազետ, Մակու, Արծափ /q օղնալ, ժողվել/), ե,ո երկբարբառային հնչյուններ են գործածվում Մշո, Վանի, Դիադինի, Բայազետի բարբառներում, Մակուի, Արծափի խոսվածքներում, մասամբ նաև Խոյ-Մարաղայի բարբառում (ցօրեն, խրնձոր, տերեվ): Արարատյան բարբառում և Գանձակի միջբարբառում ույ, յու երկհնչյունների դիմաց առկա է ի (արին, քիր): Շրթնայնացած ա ձայնավոր ունի Բայազետի բարբառը⁷, այդ հնչյունը ավելի թույլ դրսևորվում է Վանի, Մշո բարբառներում, բառավերջում Արծափի խոսվածքը և մասամբ Մակուն ունեն բաց արտասանությամբ է երկբարբառ և այլն: Բարբառները տարբեր են նաև ըստ շեշտի դիրքի: Եթե Մշո, Կարնո, Դիադինի, Վանի, Սասունի, Խոյ-Մարաղայի, Բայազետի բարբառները, Մակուի և Արծափի խոսվածքները ունեն վերջնավանկային շեշտ (գարո ւն), ապա Արարատյան, Ղարաբաղի, Կարճևանի, Կաքավաբերդի բարբառները, Վայոց ձորի և Գանձակի միջբարբառները ունեն վերջընթեր շեշտ (կա րունք):

Քերականական հատկանիշներ

Էական են բարբառային առանձնահատկությունները ձևաբանական մակարդակում: Գոյականի հոլովական համակարգում զգալի են հոլովների ձևավորման յուրահատկությունները: Այսպես, բացառական հոլովը է կազմիչ է ունենում Սասունի, Կարնո, Խոյ-Մարաղայի բարբառներում (քախքեն), ց կազմիչ՝ Վանի, Բայազետի, Արարատյան բարբառներում, Գանձակի միջբարբառում, Մակուի և Արծափի խոսվածքներում (տընից), ա կազմիչ՝ Ղարաբաղի բարբառում (հացան), է և ց կազմիչներ՝ Մշո, Դիադինի բարբառներում, Վայոց ձորի խոսվածքում: Որոշ բարբառներ ունեն վերլուծական բացառական (Սասուն. թօռան ինա թոռից, Ղարաբաղ. ախսօր անա՝ եղբորից, փաղան նըէտա՝ փայտից, Կարճևան. քի հենի՝ քեզնից, Կաքավաբերդ. կաղնին նանի կաղնուց): Գործիական հոլովը ալ վերջավորություն ունի Ղարաբաղի, Կարճևանի և Կաքավաբերդի բարբառներում (հացավ), Ղարաբաղի բարբառում գործածական է նաև վերլուծական գործիականի ձև (ախսօր անավ): Բարբառային շատ միավորներ (Մուշ, Վան, Կարին, Սասուն, Դիադին, Բայազետ, Խոյ-Մարաղա, Մակու, Արծափ) ներգո-

⁶ Ձայնավորների քմայնացումն այստեղ արտահայտել ենք շեղ գրությամբ:

⁷ Այդ ձայնավորի արտասանական առանձնահատկությունների, գործածության օրինաչափությունների մասին տե՛ս [26]:

յական հոլովի հատուկ ձև չունեն, այդ իմաստն արտահայտում են հայցականով կամ կապային կառույցով (դաշտը // դաշտի մէջը՝ դաշտում): Արծափի և մասամբ էլ Մակուի խոսվածքները ներգոյականի իմաստն արտահայտում են նաև տրականով (դաշտին՝ դաշտում): Ու հոլովման տարածվածությունն նկատելի է Մշո, Սասնո, Դիադինի բարբառներում (ճամփու, դ՛ըրգեցներու), հատուկ տեղանունները Ա վերջադրական հոլովման են ենթարկվում Մշո, Վանի, Բայազետի, Դիադինի, Խոյ-Մարադայի բարբառներում, Վայոց ձորի միջբարբառում, մասամբ նաև Մակուի և Արծափի խոսվածքներում (Բուլանըխա, Սեվանա), իսկ Կաքավաբերդի բարբառում Ա վերջադրական հոլովման ենթարկվում են հատուկ անձնանունները (Հայկա): Սասնո բարբառում գործածական են *զ* և *ի* նախդիրները (զօջխար համբեր, ի տուն նստած է), Ղարաբաղի և Կարճևանի բարբառները հին հայերենի պես ունեն անձներական թվականներ (իբիքէն՝ երեքն էլ): Դերանունների տրական հոլովածներում *ի*, *իկ* հավելվածներ են հանդես գալիս Մշո, Կարնո, Վանի, Բայազետի, Դիադինի, Խոյ-Մարադայի բարբառներում, Մակուի, Արծափի խոսվածքներում (ընձի, քրզի, էսի, էսիկ), ցուցական դերանունների երկշարք համակարգեր են դրսևորվում Մշո և Խոյ-Մարադայի բարբառներում (իդա /սա, դա/, ինա /նա/): Բարբառային խոսքում բազմազան դրսևորումներ ունի անձերին վերաբերող հարցահարաբերական դերանունը: Մշո բարբառում *ուլ* դերանվան իմաստով գործածվում են *օլ*, *վոն* ձևերը, Արարատյանում, Գանձակում և Վայոց ձորում՝ *օլ*, Սասունում՝ ուլ, Վանի բարբառում և Արծափում՝ *վոլ*, Կարնո բարբառում՝ *վօլ*, Խոյ-Մարադայում՝ *վալ*, Ղարաբաղում, Կաքավաբերդում և Կարճևանում՝ *հու*, *հուլ*, Բայազետում և Մակուում՝ *վորը*, *վոն*, Դիադինի բարբառում՝ *վոն*:

Բարբառային հայերենում բազմազան են բայական իրողությունների տարբերակային դրսևորումները: Մասնավորապես հարակատար դերբայը *ուկ* վերջավորություն ունի Մշո, Սասնո, Վանի, Դիադինի, Բայազետի բարբառներում, Մակուի և Արծափի խոսվածքներում, մասամբ նաև՝ Խոյ-Մարադայի բարբառում (խըմուկ): Վաղակատար դերբայը *ը* կազմիչ է ունենում Մշո, Վանի, Սասնո, Դիադինի, Բայազետի, Խոյ-Մարադայի բարբառներում, Մակուի և Արծափի խոսվածքներում (տէսեր): Այդ դերբայը *ալ* վերջավորությամբ է ձևավորվում Ղարաբաղի, Կարճևանի և Կաքավաբերդի բարբառներում (խըմալ, պիրալ): Որոշ բարբառներ (օր.՝ Մշո, Բայազետի բարբառները) ապառնի դերբայ չունեն, այլ բարբառներ ունեն ապառնի դերբայի յուրահատուկ վերջավորություններով ձևեր, ինչպես՝ Ղարաբաղ՝ -ական (պիրիլական՝ բերելու), Կարճևան՝ -ացուկ (ըղըլացուկ՝ աղալու), Վայոց ձոր՝ -օ (թըռնիլօ՝ թռչելու): Անցյալ կատարյալ ժամանակաձևի

վերլուծական կազմություն ունեն Կարճևանը (իփալ ըմ՝ եփեցի) և Կաքավաբերդը (խըմալ ըմ՝ խմեցի): Անկատար անցյալ ժամանակաձևի համադրական՝ գրաբարաձև, կազմություն ունեն Գանձակի միջբարբառը և Լոռու խոսվածքը (բերէի՝ բերում էի): *Եւ* օժանդակ բայի եզակի թվի 3-րդ դեմքում *ա* ձև ունեն Արարատյան, Ղարաբաղի, Բայազետի, Դիաղինի, Կաքավաբերդի, Կարճևանի բարբառները, Վայոց ձորի, Գանձակի միջբարբառները, Մակուի խոսվածքը: Կարնո բարբառն ունի *է* ձև, Մուշն ունի *է* կամ *ա*, Վանը՝ *ի*, Խոյ-Մարաղան՝ *ի* կամ *ը*, Սասունը՝ *ը*, Արծափը՝ բաց *է*: Օժանդակ բայի անցյալի բաղադրյալ ձևեր ունեն Խոյ-Մարաղան (էմ էր՝ էի, էս էր՝ էիր), Կարճևանը (իմ լէ՝ էի), Կաքավաբերդը (ըմ լաղ՝ էի): Ժխտական մասնիկները դերբային հետադաս են Ղարաբաղի բարբառում, Վայոց ձորի, Գանձակի միջբարբառներում, Լոռու խոսվածքում (օր.՝ լըսըմ չէմ, աղամ վօջ, քընալ մէք):

Առավել կարևոր են ներկայի արտահայտության եղանակները, որոնցով և բարբառները ենթարկվել են ձևաբանական դասակարգման (տե՛ս [4, 5, 29, 31])⁸: Ըստ այդմ՝ դիտարկվող բարբառային միավորներում ներկան արտահայտվում է երկու եղանակով՝ ա) դերբայով և օժանդակ բայով, բ) *կը* մասնիկով և գրաբարատիպ ներկայի ձևերով:

Առաջին եղանակով ներկա ժամանակաձևը կազմող բարբառները ունեն տարբեր կազմությամբ անկատար դերբայ: Այսպես, *աւ* վերջավորություն (կամ դրա *ըւ* տարբերակ) ունեցող դերբայով են ներկան կազմում Արարատյան, Ղարաբաղի, Բայազետի բարբառները, Վայոց ձորի, Գանձակի միջբարբառները, Մակուի, Արծափի խոսվածքները (գ՛ ըրում, կառթում): Օժանդակ բայի նկատմամբ դերբայի դիրքով պայմանավորված՝ *ա* կամ *չ* կազմիչ ունեցող դերբայով է ներկան կազմվում Խոյ-Մարաղայի բարբառում (կի՛րէս էմ, չէմ կի՛րէլի): Բայի լծորդությամբ պայմանավորված՝ *ա* կամ *աւ* կազմիչ ունեցող դերբայով է ներկան կազմվում Կաքավաբերդի բարբառում (մընալիս իմ, խըմում ըմ): Կարճևանի բարբառը *ա* կազմիչ ունեցող դերբայով է ներկան կազմում (*իս իմ իփիս*, նան *իփիս* իմ):

Ներկա ժամանակաձևը *կը* մասնիկով (կամ դրա *գը* տարբերակով) են ձևավորում Կարնո, Մշո, Վանի, Սասնո և Դիաղինի բարբառները: Ընդ որում, եթե Կարնո բարբառում այդ մասնիկը կարող է բայաձևին

⁸ Համաձայն ձևաբանական դասակարգման՝ Արարատյան, Ղարաբաղի, Բայազետի բարբառները, Վայոց ձորի և Գանձակի միջբարբառները, Մակուի և Արծափի խոսվածքները կընդգրկվեն Ում ճյուղում, Խոյ-Մարաղայի, Կաքավաբերդի և Կարճևանի բարբառները վերաբերում են Լիս ճյուղին, իսկ Կարնո, Մշո, Վանի, Դիաղինի և Սասնո բարբառները ընդգրկվում են Կը ճյուղում:

նախորդել կամ հաջորդել (կերթա, նըստի կը), ապա մյուս բարբառներում մասնիկը միշտ նախադաս կիրառություն ունի (կըխըմիմ, գըկըրըմ):

Ինչ խոսք, բարբառային հայերենը բնութագրվում է բազմաթիվ այլ հատկանիշներով, որոնք տարբեր տարածքներում դրսևորվում են ինքնատիպ փնջերով՝ այդպիսով ձևավորելով յուրահատուկ բարբառային միավորներ: Այդ իրողությունը հաշվի առնելով՝ Գ.Ջահուկյանը կատարել է հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգում (տե՛ս [1], էջ 132-136)⁹:

Եզրակացություն: Հայաստանի Հանրապետությունում բարբառային հայերենի տարբերակների, ինչպես նաև բարբառային հատկանիշների տարածման ներկա խայտաբղետ պատկերը հետևանք է հայ ժողովրդի համար անբարենպաստ աշխարհաքաղաքական, պատմական իրադարձությունների: Նախքան եղեռնը արձանագրված առնչվածն 44 բարբառներից այսօրվա Հայաստանում գործածվում են ընդամենը 15 բարբառային միավորներ՝ 11 բարբառ, 2 միջբարբառ և որևէ բարբառի կազմում բարբառագետների կողմից դեռևս հիմնավորապես չընդգրկված 2 խոսվածք: Բնիկ բարբառային միավորներին զուգահեռ՝ գործառում են նաև Արևմտյան Հայաստանից, Պարսկահայքից 19-րդ դարի ընթացքում, այնուհետև եղեռնի տարիներին գաղթականների շնորհիվ փրկված բարբառներ: Հայ բարբառների տարածման նախնական պատկերը խախտված է, և շատ դեպքերում կողք կողքի գործածվում են միմյանցից էականորեն զանազանվող, տարբեր խմբերի պատկանող բարբառային միավորներ, որոնք, ճիշտ է, ժամանակի ընթացքում պահպանել են իրենց հիմնական հատկանիշները, սակայն որոշ դեպքերում նաև առաջ են բերել խառը տիպի խոսվածքներ:

⁹ Համաձայն Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման՝ Խոյ-Մարաղայի բարբառը ձևավորում է բարբառների արևելյան խմբակցության հարավարևելյան բարբառախումբը, Արարատյան և Բայազետի բարբառներն ընդգրկվում են արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբում, Ղարաբաղի բարբառը և Գանձակի միջբարբառը նույն խմբակցության ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբում են, արևելյան խմբակցության Ագուլիս-Մեղրիի բարբառախմբի Մեղրու բարբառի կազմում են Կարճևանի և Կաքավաբերդի բարբառային միավորները: Բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում է Կարնո բարբառը, հարավկենտրոնական բարբառախմբում են Մշո և Սասնո բարբառները, նույն խմբակցության հարավային միջբարբառախմբում են ընդգրկված Վանի և Դիաղիների բարբառները (տե՛ս [1], էջ 132-136): Վայոց ձորի միջբարբառը, Մակուի և Արծափի խոսվածքները բազմահատկանիշ դասակարգման մեջ ներառված չեն:

Դիտարկված բարբառային միավորներն ունեն տարբեր տարածվածություն: Տարբեր մարզերում առավել տարածված են Արարատյան, Խոյ-Մարաղայի, Մշո բարբառները, այլ բարբառային միավորներ հանդիպում են մեկ-երկու մարզում, ինչպես Բայազետի, Ղարաբաղի, Կարնո բարբառները, Մակուի և Արծափի խոսվածքները: Կան բարբառներ էլ, որոնց տարածական ընդգրկումը խիստ սահմանափակ է, ինչպես, օրինակ, Դիադինի, Կաքավաբերդի, Կարճևանի բարբառները: Վերջին երկուսը ընդհանրապես առանձնանում են բարբառակիրների խիստ սակավ քանակով և կորստյան վտանգի են ենթակա: Բարբառակիրների լայն ընդգրկում ունեն հատկապես Արարատյան, Խոյ-Մարաղայի, Կարնո, Մշո բարբառները: Անկախ լեզվակիրների քանակից՝ բարբառային բոլոր միավորներն էլ բնութագրվում են իրենց հնչյունաբերականական հատկանիշների յուրօրինակ փնջերով, որոնք ժամանակի ընթացքում չեն տարրալուծվում և պահպանում են իրենց ամբողջականությունը, քանի դեռ բարբառային միավորները մնում են որպես կենդանի հաղորդակցման միջոց այս կամ այն հանրության մեջ: Բարբառային հիշյալ միավորներին զուգահեռ՝ երկրում բանավոր հաղորդակցման միջոց են նաև խառը տիպի խոսվածքներ, խոսակցական լեզվի դրսևորումներ:

Բարբառային խոսքը Հայաստանի Հանրապետությունում գործառուում է ընդհանուր հայերենի շրջանակում՝ լեզվի այլ տարբերակների հետ շփումներով ու փոխազդեցություններով:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
e-mail: inslang@sci.am, viktorkatvalyan@mail.ru

Վ.Լ. Կատվայան

Բարբառային հայերենը Հայաստանի Հանրապետությունում

Ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում ներկայում գործածվող բարբառային միավորները, համառոտ տեղեկություններ են տրվում դրանց պատմական զարգացման, տարածական հիմքերի, կրողների քանակի վերաբերյալ: Միաժամանակ պարզ է դառնում, թե ՀՀ մարզերից յուրաքանչյուրում որ բարբառային միավորներն են հանդես գալիս իբրև հաղորդակցման հիմնական միջոց: Բարբառային հայերենը հատկանիշների տարբերակային բազում դրսևորումներ ունի, որոնցից առավել էականները ներկայացվում են աշխատանքում՝ վեր հանելով ինչպես բարբառների խմբերի, այնպես էլ առանձին բարբառների յուրօրինակություններ: Հայաստանի Հանրապետությունում գործածվող բարբառային 15 միավորների գերակշիռ մասն ունի բավականաչափ ընդգրկում, կենսունակ է և շարունակում է առկա պայմաններին համապատասխան զարգացման ընթացքը, սակայն որոշ բարբառներ ունեն խիստ սակավ քանակի կրողներ, և նրանց հետագա գոյությունը վտանգված է:

В. Л. Катвалян

Диалектный армянский язык в Республике Армения

Представлены диалектные единицы, используемые в настоящее время в Республике Армения, даются краткие сведения об их историческом развитии, территориальной основе и численности носителей. Выявлены диалектные единицы, являющиеся основным средством общения в каждом из регионов РА. Диалектный армянский язык имеет множество различительных характеристик, наиболее существенные из которых представлены в работе; подчеркиваются особенности как групп диалектов, так и отдельных диалектов. Большинство из 15 диалектных единиц, используемых в Республике Армения, имеют достаточный охват, жизнеспособны и развиваются в соответствии с нынешними условиями, однако некоторые диалекты имеют очень мало носителей и их существование в будущем находится под угрозой.

V. L. Katvalyan

Dialectal Armenian in the Republic of Armenia

The article presents the dialect units currently used in the Republic of Armenia, gives brief information about their historical development, territorial foundations, and the number of speakers. At the same time, it becomes clear which dialect units are the main means of communication in each of the regions of the Republic of Armenia. Dialectal Armenian has many different manifestations of features, the most significant of which are presented in the work, highlighting the peculiarities of both groups of dialects and individual dialects. Most of the 15 dialect units used in the Republic of Armenia have a sufficient coverage, are viable and continue the course of development appropriate to the current conditions, but some dialects have very few speakers and their future existence is threatened.

Գրականություն

1. *Ջահուկյան Գ.*, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1972, 346 էջ:
2. *Այտընյան Ա.*, Քննական քերականություն արդի հայերեն լեզուի, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1866, 866 էջ:
3. *Патканов К.*, Исследование о диалектах армянского языка, СПб, тип. Имп. АН, 1869, 109 էջ:
4. *Աճառյան Հ.*, Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների, Մոսկվա – Նոր Նախիջևան, Լազարյան ճեմարանի հրատ., 1911, 307 էջ:
5. *Ղարիբյան Ա.*, Հայ բարբառագիտություն, Ե., ՀՍՄԲ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., 1953, 457 էջ:
6. *Բաղդասարյան-Թափալցյան Ա.*, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1973, 356 էջ:

7. *Աճառյան Հ.*, Քննություն Վանի բարբառի, Ե., ԵՊՀ հրատ., 1952, 300 էջ:
8. *Ասատրյան Մ.*, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., ԵՊՀ հրատ., 1962, 256 էջ:
9. *Բաղդասարյան-Թափալցյան Ս.*, Մշո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 277 էջ:
10. *Մկրտչյան Հ.*, Կարնո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, 191 էջ:
11. *Մուրադյան Մ.*, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 108-183:
12. *Մարկոսյան Ռ.*, Արարատյան բարբառը, Ե., «Լույս» հրատ., 1989, 390 էջ:
13. *Ֆաղրավյան Ռ.*, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., ա. հ., 1972, 226 էջ:
14. *Մկրտչյան Ն.*, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, Ե., հ.հ., 2006, 600 էջ:
15. *Դավթյան Կ.*, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, 506 էջ:
16. *Աբրահամյան Ա.*, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Ե., «Գիտություն» հրատ., 2013, 333 էջ:
17. *Աղաբեկյան Ս.*, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս, պ. 3, Ե., «Նաիրի» հրատ., 2010, էջ 154-165:
18. *Բառնասյան Ջ.*, Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում, Ե., «Նաիրի» հրատ., 2009, 124 էջ:
19. *Գևորգյան Գ.*, Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագրերը, Ե., «Լիմուշ» հրատ., 2013, 242 էջ:
20. *Խաչատրյան Հ.*, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., «Լուսաբաց» հրատ., 2009, 315 էջ:
21. *Մեսրոպյան Հ.*, Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., «Նաիրի» հրատ., 2010, 320 էջ:
22. *Միքայելյան Շ.*, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., «Նաիրի» հրատ., 2009, 144 էջ:
23. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:
24. *Կատվալյան Վ.*, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, գիրք 1, Գեղարքունիքի մարզ, Ե., «Ատողիկ» հրատ., 2018, 402 էջ:
25. *Կատվալյան Վ.*, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, գիրք 2, Կոտայքի մարզ, Ե., «Ատողիկ» հրատ., 2020, 492 էջ:
26. *Կատվալյան Վ.*, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., «Ատողիկ» հրատ., 2016, 534 էջ:

27. Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 259 էջ:
28. Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 236 էջ:
29. Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1953, 407 էջ:
30. Վարդանյան Ա., Վայոց ձորի միջբարբառը, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2004:
31. Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., ԵՊՀ հրատ., 1967, 543 էջ:
32. Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1954, 199 էջ:
33. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., ԵՊՀ հրատ., 2013, 624 էջ:
34. Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., «Հայաստան» հրատ., 1987, 256 էջ: